

**«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն»  
մագիստրոսական նոր ծրագիրը Երևանի պետական համալսարանում**

**«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն»  
մագիստրոսական ծրագրի ստեղծումը որպես «Տեմպուս 4» ծրագրին ԵՊՀ  
Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի  
մասնակցության նպատակ**

«Տեմպուս» ծրագրի մուտքը Հայաստան ազդարարվեց 1995 թվականին: Այդ ժամանակահատվածից սկսած «Տեմպուսի» ծրագրերը Հայաստանում իրականացվել են մի քանի փուլով: 2007 թվականից Հայաստանում մեկնարկեց Տեմպուս 4-ը, որի հիմնական նպատակներն են.

1. Գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացումը
2. Գործընկեր երկրներում բարձրագույն կրթության որակի և գործնական արժեքի բարձրացումը
3. Մարդկային ռեսուրսների զարգացումը
4. Գործընկեր երկրներում բարձրագույն կրթության բարեփոխումներին և արդիականացման գործընթացներին աջակցելը
5. Եվրամիության և գործընկեր երկրների ժողովուրդների և մշակույթների միջև փոխըմբռնման բարելավումը:

Այսպիսով, «Տեմպուսը» շարունակում է աջակցել բարձրագույն կրթության անցումային և արդիականացման գործընթացներին՝ մշտապես հաշվի առնելով բարձրագույն կրթության ազգային առաջնահերթությունները:

«Տեմպուս 4» ծրագրի շրջանակներում այսօր Հայաստանում իրականացվում են բարձրագույն կրթությանն ուղղված բազմաթիվ ծրագրեր, որոնք հիմնված են միջազգային համագործակցության վրա: Այդ ծրագրերից մեկը հանդիսանում է «Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագիրը, որում որպես գործընկեր համալսարան ընդգրկված է նաև Երևանի պետական համալսարանը, ի դեմս Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի: Ծրագրի նպատակն է՝ աջակցել գործընկեր համալսարաններին ստեղծելու երկրի և տարածաշրջանի պայմաններին ու առաջնահերթություններին հարիր, կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգին համապատասխանող մագիստրոսական նոր ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով: Ծրագրում որպես գործընկերներ ընդգրկված են.

*Երևանի պետական համալսարան*

*Երևանի պետական բժշկական համալսարան*

*Մոլդովայի պետական համալսարան*

*Բժշկական և դեղագործական Մոլդովայի պետական համալսարան*

*«Վրաստանի» համալսարան*

*Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարան*

**ԵՄ երկրներ**

**Մեծ Բրիտանիա, Կումբրիայի համալսարան (ծրագրի համակարգող)**

**Շվեդիա Թագավորական տեխնիկական համալսարան (գործընկեր համալսարանների տեխնիկական վերազինման գծով պատասխանատու)**

**Ռումինիա Բաբես Բոլիայի համալսարան (ծրագրի իրականացման որակի համար պատասխանատու):**

Այսպիսով, ծրագիրը միավորում է բազմամասնագիտական թիմ՝ բաղկացած ԵՄ 3 կ գործընկեր 6 համալսարաններից՝ յուրահատուկ հնարավորություն ընձեռելով զարգացնելու մագիստրոսական նոր, կատարելագործված ծրագրեր և դասընթացներ:

Որպես «Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագրին մասնակցության նպատակ՝ ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը հայտարարեց ԵՊՀ սոցիալական աշխատանքի մագիստրատուրայում «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մասնագիտացման ստեղծումը: Մագիստրոսական նոր ծրագրի նպատակն է պատրաստել սոցիալական քաղաքականության և սոցիալական ծառայությունների վարչարարության գծով մասնագիտացած որակյալ կադրեր:

Այսպիսով, Երևանի պետական համալսարանն առաջինն է ՀՀ-ում, որ նախաձեռնեց «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մասնագիտացման ստեղծումը և այդ գծով մասնագետների պատրաստման գործընթացը:

**«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի նպատակները և խնդիրները**

ԵՊՀ-ում 2007-2008 ուս. տարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008-2009 ուս. տարվանից նաև բակալավրիատի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարել ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի և անհատական կրթական ծրագրերի իրականացման լայն հնարավորություն:

ԵՊՀ –ում մագիստրոսի կրթական ծրագիրը ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Ըստ այդմ, կիսամյակի ուսումնական պարապմունքների տևողությունը սահմանվում է 16 շաբաթ:

Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ԵՊՀ ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 ECTS կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի 12.00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:

Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 6 կրեդիտ՝ ընդհանուր դասընթացի կրթամասից, և 48 կրեդիտ՝ հետազոտական կառուցամասից:

Մնացած կրեդիտների (մինչև 66) բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և կամընտրական դասընթացներով:

Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված բոլոր դասընթացները եզրափակիչ գնահատումով դասընթացներ են, որոնց գնահատման կառուցվածքը հետևյալն է.

Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ և եզրափակիչ քննությունների անցկացման ձևը՝ դասընթացը կազմակերպող ամբիոնի առաջարկությամբ հաստատում է ֆակուլտետի ղեկանը:

Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած կիսամյակային գնահատականը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի.

ա. դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր,

բ. ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքից, որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ. եզրափակիչ քննության արդյունքից, որը կարող է գնահատվել 10 միավոր:

Դասընթացի կիսամյակային գնահատականը հաշվարկվում է որպես վերոգրյալ բաղադրամասերի հանրագումար:

ԵՊՀ կանոնադրության մեջ ամրագրված վերոնշյալ պահանջներին և պայմաններին համապատասխան գործում է նաև «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագիրը: Նպատակ հետապնդելով պատրաստել սոցիալական քաղաքականության և սոցիալական վարչարարության գծով մասնագետներ՝ «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի շրջանակներում իրականացվում է հետևյալ դասընթացների ուսուցում, որոնք բաշխված են 4 խմբի.

1. *Մասնագիտական պարտադիր դասընթացներ*
2. *Լրացական պարտադիր դասընթացներ*
3. *Ընդհանուր դասընթացներ*
4. *Կամընտրական դասընթացներ*

**Մասնագիտական դասընթացները** ներառում են հետևյալ դասընթացները՝ «Սոցիալական քաղաքականության պատմություն», «Սոցիալական տեսություններ», «Սոցիալական կառավարման մոդելներ», «Սոցիալական քաղաքականության ռազմավարական պլանավորում», «Սոցիալական ռիսկի կառավարում», «Սոցիալական ապահովության համակարգը ՀՀ-ում», «Սոցիալական քաղաքականության հետազոտման մեթոդները», «Հայաստանի արդի սոցիալական քաղաքականությունը», «Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքը», «Աղքատություն և սոցիալական անհավասարություն», «Մակրոպրակտիկա, Եվրոպական սոցիալական քաղաքականություն», «Կառավարման հոգեբանություն», «Ծրագրերի կառավարում»:

**Լրացական պարտադիր դասընթացները**նդգրկում են՝ անգլերեն լեզու, մասնագիտական փիլիսոփայության հարցեր:

**Ընդհանուր դասընթացներ**՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում», «Մասնագիտական արդիական հիմնախնդիրները»

**Կամընտրական դասընթացներ**

Համայնքային կազմակերպում/ Սոցիալական պետության զարգացման տեսություն,

Սոցիալական գործընկերություն / Սոցիալական իրավունք,

Սոցիալական բարեկեցությունը II աշխարհի երկրներում / Եվրոպական պատժիչ քաղաքականություն:

«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում սովորող ուսանողները նաև հնարավորություն կունենան ներգրավվել Կոնեկտիկուտի (ԱՄՆ) Սոցիալական աշխատանքի դպրոցի հետ կազմակերպվող *on-line* դասընթացին, որի թեման է «Սոցիալական բարեկեցության քաղաքականությունը ԱՄՆ-ում և երկրորդ աշխարհի երկրներում»: Այս դասընթացը հնարավորություն է ընձեռում ուսանողներին մասնակցելու Կոնեկտիկուտի համալսարանի հետ իրականացվող՝ *ուսանողների փոխանակման ծրագրին*: Դասընթացի ավարտին ուսանողներին տրվում է *ԵՊՀ և Կոնեկտիկուտի համալսարանի համատեղ վկայական*, որը հավաստում է դասընթացը հաջող ավարտելու մասին:

**«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն»  
մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդվող առարկաների  
ցանկը (աղյուսակ)**

<b>Մասնագիտական պարտադիր առարկաներ</b>				
	<b>Դասընթաց</b>	<b>Դասախոս</b>	<b>Կի-սամ-յակ</b>	<b>Կրե-դիտ</b>
1.	Սոցիալական քաղաքականության պատմություն	Անտոնյան Միրա	1	3
2.	Սոցիալական տեսություններ	Կարապետյան Լուսինե	1	3
3.	Սոցիալական կառավարման մոդելները	Քարամյան Լուսինե	1	3
4.	Սոցիալական քաղաքականության ռազմավարական պլանավորում	Գևորգյան Վարդան	1	3
5.	Սոցիալական ռիսկի կառավարում	Կարապետյան Լուսինե	1	3
6.	Սոցիալական ապահովության համակարգը ՀՀ-ում	Մարտիրոսյան Ռազմիկ	1	3
7.	Սոցիալական քաղաքականության հետազոտման մեթոդները	Խաչատրյան Արտակ	2	3
8.	Հայաստանի արդի սոցիալական քաղաքականությունը	Յարմալոյան Մարինե	2	3
9.	Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքը	Վարդանյան Եվգինե	2	3
10.	Աղքատություն և սոցիալական անհավասարություն	Մելքումյան Յուլիանա	2	3
11.	Մակրոպրակտիկա	Ոսկանյան Աննա	3	3
12.	Եվրոպական սոցիալական քաղաքականություն	Անտոնյան Միրա	3	3
13.	Կառավարման հոգեբանություն	Սահակյան Անահիտ	3	3
14.	Ծրագրերի կառավարում	Ոսկանյան	3	3

		Աննա		
--	--	------	--	--

Ընդհանուր դասընթացներ				
	Մոդուլ-դասընթաց	Դասախոս	Կիսամյակ	Կրեդիտ
1.	Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում	-	1	3
2.	Մասնագիտության արդիական հիմնախնդիրները	Նունե Գեղամյան	1	3

Լրացական պարտադիր դասընթացներ				
	Մոդուլ-դասընթաց	Դասախոս	Կիսամյակ	Կրեդիտ
1.	Անգլերեն լեզու	-	1	0
2.	Մասնագիտության փիլիսոփայության հարցեր	-	1	0

Կամընտրական դասընթացներ				
	Մոդուլ-դասընթաց	Դասախոս	Կիսամյակ	Կրեդիտ
1.	Համայնքային կազմակերպում/ Սոցիալական պետության զարգացման տեսություններ	Քարամյան/Մելքումյան	2	3
2.	Սոցիալական գործընկերություն / Սոցիալական իրավունք	Անտոնյան/ Յարմալոյան	2	3
3.	Սոցիալական բարեկեցությունը II աշխարհի երկրներում / Եվրոպական պատժիչ	Յարմալոյան/ Խաչատրյան	3	3

	քաղաքականություն			
--	------------------	--	--	--

**«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն»  
մագիստրոսական ծրագրի շրջանակներում դասավանդվող  
մասնագիտական առարկաների ուսումնական ծրագրերը**

***Պարտադիր մասնագիտական առարկաներ***

***Սոցիալական քաղաքականության պատմություն  
Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, 3 կրեդիտ  
Նպատակը.***

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին Հայաստանում և արտերկրում սոցիալական քաղաքականության զարգացման հիմնական փուլերի, զարգացման օրինաչափությունների և ճգնաժամերի, ինչպես նաև սոցիալական քաղաքականության ձևավորմանը նպաստած գիտական-տեսական ու արժեքային-գաղափարական, տնտեսական ու իրավական, քաղաքական ու ինստիտուցիոնալ հիմքերի հետ:

***Կրթական արդյունքները.***

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա մեկնաբանել «սոցիալական քաղաքականություն» հասկացությունը և ներկայացնել սոցիալական քաղաքականության զարգացման հիմնական փուլերը, հասկանալ սոցիալական քաղաքականության սկզբնավորումն ու զարգացումը, վերլուծել և վեր հանել սոցիալական քաղաքականության ժամանակակից համակարգերի և մոտեցումների կապը պատմական նախընթաց ժամանակահատվածների հետ, համեմատել սոցիալական քաղաքականության տարբեր փուլերում կիրառվող մոտեցումները հայաստանյան իրականության հետ, վերլուծել ժամանակակից սոցիալական քաղաքականության հիմնախնդիրները:

***Բովանդակությունը.***

**Թեմա 1.** Սոցիալական քաղաքականության ակունքները Եվրոպայի և համաշխարհային պատմության մեջ: **Թեմա 2.** Անգլիայում աղքատության հաղթահարմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումները որպես «Աղքատության մասին» օրենքի ձևավորման նախադրյալներ: **Թեմա 3.** Սոցիալական բարեկեցության քաղաքականության ձևավորման և զարգացման փուլերը ԱՄՆ-ում: **Թեմա 4.** Ժամանակակից բարեկեցության հեղափոխությունը ԱՄՆ-ում: **Թեմա 5.** Սոցիալական քաղաքականության հիմնական ճգնաժամերն ու բարեփոխումները 20-րդ դարում: **Թեմա 6.** Բարեկեցության տեսության զարգացումը: **Թեմա 7.** Բարեկեցության պետության տիպաբանությունը Եվրոպայում: **Թեմա 8.** Սոցիալական բարեկեցության ոլորտի նախաձեռնությունները և սոցիալական ծառայությունների բարեփոխումը: **Թեմա 9-10.** Բարեգործությունն ու սոցիալական քաղաքականությունը Հայաստանում`

հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: **Թեմա 11.** ՀՀ սոցիալական քաղաքականությունն անցումային փուլում և արդի վիճակը:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

*Սոցիալական տեսություններ*

*Շարաթական 4 ժամ, 1-ին կիսամյակ, 6 կրեդիտ*

**Նպատակը.**

Դասընթացի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեն ծանոթանալու սոցիալական աշխատանքի դասական ու ժամանակակից հիմնական տեսություններին, ինչպես նաև զարգացնելու քննադատական մոտեցում՝ վերլուծելու և համեմատելու սոցիալական տեսությունները: Այս տեսությունները կնպաստեն ուսանողների՝ սոցիալական հիմնախնդիրներ հասկանալու և մեկնաբանելու գործընթացին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

կկարողանա վերլուծել հասարակությունը մեկնաբանող մի շարք տեսություններ՝ սոցիալական աշխատանքի շրջանակներում, կհասկանա սոցիալական աշխատանքում տեսական մտածողության կարևորությունը՝ սոցիալական հետազոտությունների պարագայում, կցուցաբերի մասնագիտական մտածողություն՝ կիրառելով տեսական նախադրյալներ սոցիալական հետազոտությունների շրջանակներում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալական տեսությունները սոցիալական աշխատանքի համատեքստում: **Թեմա 2.** Համակարգային տեսություն: **Թեմա 3.** Կոնֆլիկտի տեսություն: **Թեմա 4.** Ուժեղացման տեսություն: **Թեմա 5.** Ասիմիլյացիոն տեսություն: **Թեմա 6.** Հոգեդինամիկ տեսություն: **Թեմա 7.** Անձի զարգացման տեսություն: **Թեմա 8.** Սիմվոլիկ ինտերակցիոնիզմ: **Թեմա 9.** Ֆենոմենոլոգիա, Սոցիալական կոնցտրուկցիոնիզմ, Հերմենևտիկա, **Թեմա 10.** Վարքաբանական տեսություններ, Սոցիալական ուսուցման և սոցիալական փոխանակման տեսություն: **Թեմա 11.** Տրանսպերսոնալ տեսություններ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**



Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:  
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4:

**Սոցիալական կառավարման մոդելներ**  
**Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ**

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է զարգացնել մագիստրատուրայում ուսանողների՝ սոցիալական ոլորտում կառավարման հետ կապված հիմնարար ունակությունները: Դասընթացի շրջանակներում ուսանողները կստանան գիտելիք սոցիալական կառավարման երեք հիմնական մոդելների և սոցիալական ոլորտում կազմակերպությունների կառավարման առանձնահատկությունների մասին: Դասընթացի որոշ թեմաները, ինչպիսիք են «կազմակերպական կառուցվածքը և կազմակերպական վարքը սոցիալական ծառայություններում», «սոցիալական ոլորտի ծրագրերի կառավարումը», «որոշումների կայացումը սոցիալական ոլորտում», «սոցիալական ոլորտի կազմակերպությունների տիպերը», օգնում են զարգացնել ուսանողների կարողությունը վերլուծելու սոցիալական ոլորտի կազմակերպությունները, զարգացնելու սոցիալական ոլորտում առաջնորդության հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կլիմանա ինչ է «սոցիալական կառավարում» հասկացությունը, կառավարման նպատակները և գործառույթները կհասկանա սոցիալական կառավարման երեք հիմնական մոդելների տարբերությունները կկարողանա մեկնաբանել սոցիալական ոլորտի կազմակերպությունների առանձնահատկությունները, մասնավորապես ինտեգրատիվ ծառայությունների և միջկազմակերպական համակարգերի կառավարումը կունենա կազմակերպությունում էթիկական երկրնտրանքները լուծելու հմտություններ կկարողանա տարբերել սոցիալական ոլորտի կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքները կունենա կազմակերպչական ու առաջնորդման հմտություններ միջմասնագիտական համագործակցության կազմակերպման համար կունենա մասնագիտական հմտություններ պետական, մասնավոր կամ հասարակական սեկտորի սոցիալական գործակալությունում որոշումների կայացման համար:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** «Սոցիալական կառավարում» հասկացությունը, նպատակները, խնդիրները և հիմնական գործառույթները: **Թեմա 2.** Սուբորդինացիան որպես սոցիալական կառավարման մոդել: **Թեմա 3.** Կոորդինացիան որպես սոցիալական կառավարման մոդել: **Թեմա 4.** Ռեօրդինացիան որպես սոցիալական կառավարման մոդել: **Թեմա 5.** Սոցիալական գործակալություններում որոշումների կայացման գործընթացի մակարդակները: **Թեմա 6.** Ինտեգրված/միջկազմակերպական համակարգերի կառավարումը սոցիալական ոլորտում: **Թեմա 7.** Սոցիալական գործակալությունների կազմակերպական կառուցվածքի ձևերը: **Թեմա 8.** Կազմակերպությունում սոցիալական փոխհարաբերությունների վերաբերյալ սոցիալական և հոգեբանական մոտեցումները: **Թեմա 9.** Սոցիալական ծառայությունների ոլորտում ինստիտուցիոնալ կառավարման հիմնական

պարադիգմերը: **Թեմա 10.** Առաջնորդությունը որպես անձնակազմի մոտիվացման և ոգեշնչման արդյունավետ գործիք:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ուսանողները կունենան 2 ընթացիկ քննություն (յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով) և 1 հանրագումարային բանավոր քննություն: Ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի (թեստ), իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման (անհատական սոցիալական նախագծեր) գնահատման հիման վրա:

**Եզրափակիչ քննությունը** բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր:

***Սոցիալական քաղաքականության ռազմավարական պլանավորում  
Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Ուսանողներին տալ ռազմավարական կառավարման, ընդհանրապես բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության ռազմավարական պլանավորման (ծրագրավորման) մասին պատկերացումներ, ինչպես նաև նրանց մոտ ձևավորել ոլորտի հիմնախնդիրների լուծմանն ուղղված ռազմավարական ծրագրավորման գործնական հմտություններ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կունենա **տեսական գիտելիքներ** ռազմավարական կառավարման՝ որպես պետական կառավարման կարևորագույն մակարդակի առանձնահատկությունների, ռազմավարական պլանավորման տեսության, պատմության և մեթոդաբանության, ռազմավարական ծրագրերի տեսակների, ինչպես նաև ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտի պետական կարգավորման ոլորտում գործող ռազմավարական ծրագրերի մասին

ձեռք կրերի հետևյալ **մասնագիտական գործնական կարողությունները՝**

- Պետության կողմից վարվող ընդհանուր, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ենթաոլորտներում վարվող քաղաքականության վերլուծության փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ենթաոլորտների հիմնախնդիրների համակողմանի վերլուծության փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտի պետական կարգավորման իրավաօրենսդրական դաշտի վերլուծության փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտում գործառնող հաստատությունների կառուցվածքագործառնության առանձնահատկությունների վերլուծության փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ենթաոլորտներում և տարբեր մակարդակներով իրականացվող քաղաքականության ռազմավարական ծրագրերի մշակման փորձ և այլն:

**Դասընթացի բովանդակությունը.**

ՀՀ պետական կառավարման համակարգի, պետության՝ որպես պետական կառավարման գործընթացի կարևորագույն սուբյեկտի առանձնահատկությունները,

Ռազմավարական պլանավորումը՝ որպես պետական կառավարման գործընթացի կարևորագույն մաս, ռազմավարական պլանավորման նկատմամբ պատմատեսական մոտեցումները,

«Սոցիալական քաղաքականություն» հասկացության էությունը, հիմնական նպատակները,

ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի՝ որպես ռազմավարական պլանավորման օբյեկտի կառուցվածքը, հիմնախնդիրները,

ոլորտի ռազմավարական կառավարման դերը պետության սոցիալական անվտանգության ապահովման գործում,

ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության հիմնական ուղղությունները, տարբեր ենթաոլորտների հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործող հիմնական ռազմավարական ծրագրերը,

Ռազմավարական պլանավորման, ռազմավարական վերլուծության մեթոդաբանությունը, տեխնիկան,

Պետական կառավարման գործընթացներում ռազմավարական պլանավորման (ծրագրավորման) ծրագրանպատակային մոտեցումը,

Ռազմավարական ծրագրերի տեսակները: Նպատակային ծրագրերը՝ որպես ռազմավարական պլանավորման կարևորագույն գործիք,

Ռազմավարական կառավարման ծրագրերի արդյունավետության մոնիթորինգի ու գնահատման առանձնահատկությունները (2 ժամ):

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

### ***Սոցիալական ռիսկի կառավարում***

### ***Շարաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, 3 կրեդիտ***

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիալական ռիսկերի տեսակների և դրանց հնարավոր հետևանքների, ռիսկերի վերլուծության և գնահատման մեթոդների, դրանց կառավարման սկզբունքների, մոտեցումների և մեթոդների, ինչպես նաև՝ ռիսկերի կառավարման գործընթացում սոցիալական քաղաքականության ինստիտուտների գործառնության հետ:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա իրականացնել սոցիալական ռիսկերի վերլուծություն և գնահատում տարբեր մակարդակներում,

կտիրապետի սոցիալական ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներին և մեթոդներին,

կիմանա և կկարողանա նախագծել որոշակի սոցիալական ռիսկերի կանխատեսման, կանխարգելման և կառավարման մոդելներ:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** «Սոցիալական ռիսկ» հասկացության բնորոշումը և սոցիալական ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը: **Թեմա 2.** Սոցիալական ռիսկերի դասակարգումը **Թեմա 3.** Սոցիալական ռիսկերի չափման առանձնահատկությունները: **Թեմա 4.** Սոցիալական ռիսկերի հետևանքները: **Թեմա 5.** Սոցիալական ռիսկերի կառավարման ռազմավարություն: **Թեմա 6.** Սոցիալական ռիսկերի կառավարման մեխանիզմները: **Թեմա 7.** Սոցիալական ռիսկերի կառավարման գործընթացի մասնակիցները: **Թեմա 8.** Սոցիալական ռիսկերի կառավարման գործընթացը: **Թեմա 9.** Սոցիալական պաշտպանությունը և սոցիալական ներառումը որպես սոցիալական ռիսկերի կառավարում: **Թեմա 10.** Սոցիալական ռիսկերի կառավարման անհրաժեշտ պայմանները:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3,3, 4 միավոր:

### ***Սոցիալական ապահովության համակարգը ՀՀ-ում***

### ***Շարաթական 2 ժամ,1-ին կիսամյակ, 3 կրեդիտ***

### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ՀՀ-ում գործող սոցիալական ապահովության համակարգը իր բաղկացուցիչ մասերով, ծանոթացնել նրանց ՀՀ-ում նոր տիպի սոցիալական ապահովության համակարգի ստեղծման անհրաժեշտության հիմնավորումներին, ստեղծման պատմությանը, համակարգում ընթացող բարեփոխումներին: Դասընթացի շրջանակներում ուսանողները կուսումնասիրեն սոցիալական ապահովության համակարգի ձևավորման իրավական հիմքերը, գործող օրենսդրությունը, իրականացվող ծրագրերը, առկա հիմնախնդիրները:

### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կհասկանա՝ ինչ է ՀՀ սոցիալական ապահովության համակարգը իր բաղադրիչներով.

1. կծանոթանա ընթացող բարեփոխումներին,
2. կծանոթանա իրականացվող ծրագրերին:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Ներածություն. համառոտ ակնարկ դասընթացի նպատակների և խնդիրների վերաբերյալ: Նոր տիպի սոցիալական ապահովության համակարգի

ստեղծման անհրաժեշտությունը ՀՀ-ում: Սոցիալական ապահովության համակարգի ստեղծման իրավական հիմքերը ՀՀ Սահմանադրությունում: **Թեմա 2.** Սոցիալական ապահովության քաղաքականությունը ՀՀ-ում: Միջազգային համաձայնագրեր, Եվրոպայի նորացված սոցիալական խարտիան, հայեցակարգեր, օրենսդրություն: **Թեմա 3.** Սոցիալական աջակցությունը ՀՀ-ում: **Թեմա 4.** Բարեգործություն եւ մարդասիրական օգնություն: **Թեմա 5.** Աղքատության ընտանեկան նպաստներ: **Թեմա 6.** Սոցիալական ապահովագրությունը եւ սոցիալական պարտադիր վճարները ՀՀ-ում: **Թեմա 7.** Կենսաթոշակային ապահովությունը ՀՀ-ում: **Թեմա 8.** Կենսաթոշակային ապահովության բարեփոխումները ՀՀ-ում: Կուտակային կենսաթոշակային համակարգ: **Թեմա 9.** Հաշմանդամների սոցիալական ապահովության համակարգը ՀՀ-ում: **Թեմա 10.** Խնամատար հաստատություններ: **Թեմա 11.** Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրները սոցիալական ապահովության համակարգում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

***Սոցիալական քաղաքականության հետազոտության մեթոդները***

***Շարաթական 2 ժամ , 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Դասընթացը ուսանողներին ծանոթացնում է սոցիալական քաղաքականության հետազոտության մեթոդներին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը Կիմանա, թե որոնք են հետազոտության մեթոդները և ինչպես են կիրառվում սոցիալական քաղաքականության ուսումնասիրման նպատակով, կկարողանա սահմանել պատճառական և պատճառային կապերը սոցիալական քաղաքականության հետազոտությունում, կկարողանա կատարել սոցիալական քաղաքականության վերլուծություն:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Վիճակագրական նշանակություն, օպտիմալ մակարդակի որոշում: **Թեմա 2.** Կանխատեսման այլընտրանքային մեթոդներ և չափանիշներ: **Թեմա 3.** Պատճառականության սահմանում և ժխտում: **Թեմա 4.** Քաղաքականության վերլուծության մեթոդներ: **Թեմա 5.** Նպատակային կանխատեսում: **Թեմա 6.** Օպտիմալ ընտրության հայտնաբերումը սոցիալական քաղաքականության վերլուծության մեջ: **Թեմա 7.** Դեդուկտիվ մոդելավորման քաղաքականության վերլուծություն:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:  
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

***Հայաստանի արդի սոցիալական քաղաքականությունը  
Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսումնասիրել Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության հայեցակարգը, գաղափարախոսական հիմքը, հիմնական սկզբունքներն ու մոտեցումները, գերակա ուղղությունները, վերլուծել տարբեր ոլորտներում իրականացվող արդի սոցիալական քաղաքականությունը:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհիմնա Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության հայեցակարգը, կհասկանա Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության բաղադրիչները, գերակա ուղղությունները, կկարողանա հանդես գալ և հաջողությամբ աշխատել որպես Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության կոնկրետ ոլորտի վերլուծություն իրականացնող:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության հայեցակարգը:

**Թեմա 2.** Եվրոպական սոցիալական խարտիան որպես Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության գաղափարախոսական հիմք: **Թեմա 3.** Սոցիալական տրանսֆերտները որպես Հայաստանի արդի սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչ: **Թեմա 4.** Առողջապահության ոլորտում իրականացվող արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում: **Թեմա 5.** Կրթության ոլորտում իրականացվող արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում: **Թեմա 6.** Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում: **Թեմա 7.** Հաշմանդամների նկատմամբ տարվող արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում: **Թեմա 8.** Տարեցների նկատմամբ տարվող արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում: **Թեմա 9.** Ընտանիքին ուղղված արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում: **Թեմա 10.** Երիտասարդներին ուղղված արդի սոցիալական քաղաքականությունը ՀՀ-ում:

***Սոցիալական քաղաքականությունը և սոցիալական աշխատանքը  
Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողին գիտելիքներ տրամադրել սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի միջև առկա փոխադարձ կապի վերաբերյալ, ծանոթացնել սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի միջև առկա փոխազդեցությունների դրսևորման հնարավոր ձևերի և մեխանիզմների հետ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա

- ✓ Ներկայացնել սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության միջև առկա փոխադարձ կապը, սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի միջև առկա հիմնարար ընդհանրությունները և առանցքային տարբերությունները,
- ✓ բնութագրել սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի կապը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հետ,
- ✓ բնորոշել սոցիալական քաղաքականության և «բարեկեցության պետության» գաղափարի միջև առկա կապը, ինչպես նաև բնութագրել սոցիալական աշխատանքի ինստիտուտի գործունեության առանձնահատկությունները բարեկեցության պետության յուրաքանչյուր մոդելի շրջանակներում,
- ✓ նկարագրել սոցիալական աշխատանքի այն մեխանիզմները և ազդեցության ձևերը, որոնց միջոցով հնարավոր է դառնում որոշակի փոփոխությունների իրականացումը սոցիալական քաղաքականության մակարդակում,
- ✓ բնութագրել սոցիալական քաղաքականության ազդեցության ձևերը սոցիալական ծառայությունների կազմակերպման և տրամադրման, ինչպես նաև այդ ծառայությունների շրջանակներում բնակչության կոնկրետ խմբերի հետ իրականացվող սոցիալական աշխատանքի վրա,
- ✓ վերլուծել տարբեր երկրներում (եվրոպական, ամերիկյան և հետխորհրդային) սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի փոխազդեցության ձևերն ու մեխանիզմները,
- ✓ համեմատել վերոնշյալ երկրներում սոցիալական քաղաքականության մշակման և կազմակերպման քաղաքական-գաղափարական հիմքերը և առանձնահատկությունները, ինչպես նաև սոցիալական աշխատանքի ինստիտուտի գործունեության բնույթն այդ երկրներում,
- ✓ բացահայտել գլոբալականացման ազդեցության դրսևորվող և հավանական հետևանքները ազգային մակարդակում իրականացվող սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի վրա:

### **Բովանդակություն.**

**Թեմա 1.** Սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի միջև առկա կապը. ընդհանրություններ և տարբերություններ: **Թեմա 2.** Սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի կապը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի հետ: **Թեմա 3.** Սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի ուսումնասիրությունը «բարեկեցության պետության» գաղափարի շրջանակներում (սոցիալական քաղաքականություն-սոցիալական աշխատանք-սոցիալական բարեկեցություն): **Թեմա 4.** Սոցիալական աշխատանքի միջազգային փորձը և սոցիալական աշխատանքի ու սոցիալական քաղաքականության միջև փոխադարձ կապի դրսևորումը տարբեր երկրներում: **Թեմա 5.** Գլոբալականացման ազդեցությունը ազգային մակարդակում իրականացվող սոցիալական քաղաքականության և սոցիալական աշխատանքի վրա: **Թեմա 6.** Սոցիալական քաղաքականության ազդեցությունը սոցիալական աշխատանքի ինստիտուտի և սոցիալական ծառայությունների վրա: **Թեմա 7.** Սոցիալական աշխատանքի ազդեցությունը սոցիալական քաղաքականության մշակման և իրագործման վրա. քաղաքական սոցիալական աշխատանք:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված երկու ընթացիկ քննություններից մեկը գրավոր է, իսկ մյուսն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի՝ ռեֆերատի հիման վրա, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

***Աղքատություն և սոցիալական անհավասարություն  
Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին աղքատության և սոցիալական անհավասարության հիմնախնդիրներին անդրադարձող սոցիոլոգիական և քաղաքական հայեցակարգերին, աղքատության սահմանումներին, չափման եղանակներին և սոցիալական քաղաքականության համատեքստում աղքատության հաղթահարման ռազմավարություններին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կծանոթանա աղքատության տեսական սահմանումներին, կսովորի տարբերակել բացարձակ, հարաբերական և սուբյեկտիվ աղքատության չափման եղանակները, կկարողանա մշակել աղքատության հաղթահարման ռազմավարական պլան:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալական արդարություն և սոցիալական հավասարություն: **Թեմա 2.** Պ. Սորոկինի սոցիալական շերտավորման տեսությունը: **Թեմա 3.** Կ. Մարքսի դասակարգային տեսությունը: **Թեմա 4.** Սոցիալական անհավասարության հետևանքները: **Թեմա 5.** Բացարձակ աղքատության հայեցակարգը: **Թեմա 6.** Հարաբերական աղքատության հայեցակարգը: **Թեմա 7.** Սուբյեկտիվ աղքատության հայեցակարգը: **Թեմա 8.** Աղքատության մշակույթ: **Թեմա 9.** Աղքատության առանձնահատկությունները անցումային հասարակություններում: **Թեմա 10.** Մպառման էմպիրիկ օրենքները: **Թեմա 11.** Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

**Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից առաջինը գրավոր է, երկրորդը՝ բանավոր, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը 1 միավոր:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

***Մակրոպրակտիկա  
Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**



Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիալական աշխատանքի մակրոմակարդակում իրականացվող պրակտիկայի հետ, տալ նրանց գիտելիքներ և հմտություններ մակրոմակարդակում միջամտություն իրականացնելու համար:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհմանա, թե ինչ է «մակրոպրակտիկա» հասկացությունը, կհասկանա ինչպես է իրականացվում սոցիալական աշխատանքը մակրոմակարդակում, կկարողանա ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ մակրոմակարդակում միջամտություն իրականացնելու համար:

**Բովանդակություն.**

**Թեմա 1.** Ներածություն. ծանոթացում դասընթացի նպատակների հետ: Սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկայի էությունը, նպատակները և առանձնահատկությունները: **Թեմա 2.** Սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկայի նկատմամբ տեսական մոտեցումների զարգացումը և արդի իրավիճակը: **Թեմա 3.** Մակրոպրակտիկայի իրականացման հիմնական սկզբունքները և այս ոլորտի սոցիալական աշխատողին անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները: **Թեմա 4.** Հասարակության մակրոկառույցները՝ հաստատություն, կազմակերպություն, համայնք և պետություն և դրանց գործունեության օրինաչափություններն ու առաջացող հիմնախնդիրները: **Թեմա 5.** Հասարակության մակրոկառույցներում սոցիալական աշխատանքի միջամտության մոտեցումները, մշակումը և իրականացման տեխնոլոգիաները: **Թեմա 6.** Սոցիալական աշխատանքի դերը սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործում որպես սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկա՝ անուղղակի և ուղիղ ծառայությունները: **Թեմա 7.** PR տեխնոլոգիաները, սոցիալական գովազդը և միջոցների հավաքագրումը որպես մակրոպրակտիկայի տեխնոլոգիաներ: **Թեմա 8.** Լոբինգը որպես մակրոպրակտիկայի տեխնոլոգիա. լոբինգի բնորոշումը, առանձնահատկությունները, նպատակները և իրականացման մեխանիզմները: **Թեմա 9.** Համայնքային բարեփոխումները որպես մակրոպրակտիկայի տեխնոլոգիա. համայնքային բարեփոխումների բնութագիրը, նպատակները և իրականացման մեխանիզմները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

*Եվրոպական սոցիալական քաղաքականություն  
Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ  
Նպատակը.*

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին եվրոպական սոցիալական քաղաքականության արժեքային, իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի, արդի հիմնախնդիրների, նպատակների, ռազմավարական ծրագրերի ու դրանց իրագործման մեխանիզմների հետ, ինչպես նաև նպաստել ուսանողների՝ եվրոպական փորձը ՀՀ սոցիալական քաղաքականության բարեփոխման նպատակով կիրառելու նախագծերի ձևավորմանը:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհամահաստատվի եվրոպական սոցիալական քաղաքականության հիմնական նպատակների, ռազմավարության և մեխանիզմների վերաբերյալ, կհասկանա եվրոպական սոցիալական քաղաքականության գաղափարական-արժեքային, իրավական և համակարգային-ինստիտուցիոնալ հիմքերը, կկարողանա մոդելավորել եվրոպական փորձի օգտագործումը՝ ՀՀ սոցիալական քաղաքականության բարելավման նպատակով:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Եվրոպական սոցիալական քաղաքականության գաղափարական հիմքերն ու եվրոպական սոցիալական մոդելի կայացման պատմությունը: **Թեմա 2.** Աղքատության հաղթահարման Անգլիայի փորձը. ժամանակակից զարգացումներ: **Թեմա 3.** Սոցիալական պետության հայեցակարգը և եվրոպական սոցիալական քաղաքականության զարգացումը: **Թեմա 4.** Բարեկեցության ժամանակակից մոդելները եվրոպական երկրներում: **Թեմա 5.** Եվրոպական սոցիալական քաղաքականության արդի հիմնախնդիրները, ճգնաժամերը և հետևանքները: **Թեմա 6.** Ժամանակակից եվրոպական սոցիալական քաղաքականության առանձնահատկությունները և տիպաբանության հիմքերը: **Թեմա 7.** Սոցիալական բարեկեցությունը եվրոպական երկրներում սոցիալական աշխատանքի արդի զարգացումների համատեքստում: **Թեմա 8.** Սոցիալական բարեկեցության անգլո-սաքսոնական մոդելը: **Թեմա 9.** Սոցիալական բարեկեցության սկանդինավյան մոդելը: **Թեմա 10.** Բարեկեցության ցուցանիշները: Ժամանակակից մոտեցումներ:

#### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

#### ***Կառավարման հոգեբանություն***

#### ***Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին կառավարման հոգեբանության էության, ինչպես նաև կառավարման համակարգի բնույթի ու առանձնահատկությունների հետ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա կառավարման համակարգի առանձնահատկությունները, կտիրապետի միջանձնային հաղորդակցման հմտություններին, կկարողանա կիրառել ձևական և ոչ ձևական խմբերում ներազդման համարժեք մեթոդներ:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Կառավարման հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2.**

Կառավարման սոցիալ-հոգեբանական տեսությունները: **Թեմա 3.** Մասնագիտական գործունեության հոգեբանական վերլուծություն: **Թեմա 4.** Մասնագիտագիր, պսիխոգրամա: **Թեմա 5.** Խմբեր, խմբերի դասակարգում: **Թեմա 6.** Կառավարման առանձնահատկությունները ձևական և ոչ ձևական խմբերում: **Թեմա 7.** Կառավարման համակարգում միջանձնային հաղորդակցման առանձնահատկությունները: **Թեմա 8.** Կառավարման ոճեր, լիդեր: **Թեմա 9.** Ներազդման մեթոդներ:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

***Ծրագրերի կառավարում***

***Շաբաթական 3 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Դասընթացը ուսանողներին ծանոթացնում է անհրաժեշտ այն գիտելիքների և հմտությունների հետ, որոնք թույլ կտան հետագայում իրականացնել սոցիալական ծրագրերի գնահատում: Դասընթացը ծանոթացնում է ներդրվող ծրագրերի մասին տեղեկատվության հավաքման և մշակման, ինչպես նաև խոչընդոտող գործոնների վերլուծության, արդյունավետ սոցիալական ծառայությունների գործարկման պահանջների հետ:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կիմանա սոցիալական ծրագրերի մասին, կհասկանա՝ ինչ է սոցիալական ծրագրերի կառավարումը, կկարողանա հետագայում իրականացնել սոցիալական ծրագրերի գրագետ կառավարում:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալական ծրագրերի կառավարում: **Թեմա 2.** Հայեցակարգային խնդիրները սոցիալական ծրագրերի համատեքստում: **Թեմա 3.** Ծրագրերը որպես սոցիալական գործունեություն. փորձ և հեռանկար: **Թեմա 4.** Սոցիալական ծրագրերի տիպերը: **Թեմա 5.** Ծրագրերի մշակման ժամանակակից մոտեցումներ: **Թեմա 6.** Հայաստանի սոցիալական քաղաքականության և սոցիալական ծրագրերի համայնապատկերը: **Թեմա 7.** Հայաստանում սոցիալական ծրագրերի զարգացման հեռանկարները:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

***Կամրնտրական առարկաներ***

***Համայնքային կազմակերպում***

***Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

**Նպատակը.**

Այս դասընթացի նպատակն է զարգացնել մագիստրատուրայում ուսանողների հիմնարար կոմպետենցիաները համայնքային կազմակերպման բնագավառում: Դասընթացի շրջանակներում ուսանողները կստանան գիտելիք համայնքային կազմակերպման՝ որպես սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկայի, հիմնական նպատակների և խնդիրների, դրա շրջանակներում կիրառվող հիմնական տեխնիկաների, համայնքում գիտակցության բարձրացման և համայնքի վրա ազդեցության/իշխանության չափման եղանակների, արդյունավետ համայնքային կազմակերպչի իրավասության տարրերի մասին:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհիմանա ինչ է «համայնքային կազմակերպում» հասկացությունը, հիմնական տեխնիկաները կհասկանա, թե որոնք են համայնքային կազմակերպման և համայնքային սոցիալական աշխատանքի այլ ձևերի միջև տարբերությունները կկարողանա բնութագրել արդյունավետ համայնքային կազմակերպչի կերպարը կունենա համայնքային կազմակերպման մեջ հանդիպող էթիկական երկրնտրանքները լուծելու կոմպետենցիաներ կունենա ծառայությունների քարտեզագրման, բանակցելու ու քննարկելու/բանավիճելու հմտություններ կկարողանա գնահատել համայնքային կարիքներ և մշակելու միջամտության ծրագիր կկարողանա չափել համայնքի «կյանքի սցենարի» վրա ազդող գործոնները:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** «Համայնքային կազմակերպում» հասկացությունը: **Թեմա 2.** Համայնքային կազմակերպման, որպես համայնքային սոցիալական աշխատանքի ձևերից մեկի, զարգացման պատմությունը և ժամանակակից պահանջները: **Թեմա 3.** Հիմնարար մասնագիտական հմտությունները և տեխնիկաները համայնքային կազմակերպման մեջ: **Թեմա 4.** Համայնքային կազմակերպման հիմնական սկզբունքները: **Թեմա 5.** Արդյունավետ համայնքային կազմակերպչի բնութագիրը կազմող տարրերը: **Թեմա 6.** «Առաջնորդներ կերտելու» գործընթացը համայնքային կազմակերպման մեջ: **Թեմա 7.** Այցելուի ակտիվացման էությունը համայնքային կազմակերպման շրջանակներում: **Թեմա 8.** Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառելիությունը համայնքային

կազմակերպման շրջանակներում: **Թեմա 9.** Համայնքային կազմակերպման հեռանկարները ՀՀ-ում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Ուսանողները կունենան 2 ընթացիկ քննություն (յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով) և 1 հանրագումարային բանավոր քննություն: Ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի (հետազոտական ծրագիր), իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման (հետազոտության արդյունքների հիման վրա շնորհանդես) գնահատման հիման վրա:

**Եզրափակիչ քննությունը** բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 2, 2 միավոր:

Վերջնական գնահատականը բաղկացած է 4 մասերից.

**Սոցիալական պետության զարգացման տեսություն  
Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, 3 կրեդիտ**

**Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ներկայացնել ուսանողներին սոցիալական պետություն հասկացության էությունը, զարգացման ու ձևավորման պատմությունը, քննարկել Հայաստանում սոցիալական պետության ձևավորման խնդիրները և հեռանկարները:

**Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհիմանա ինչ է սոցիալական պետությունը, կհասկանա սոցիալական պետության սկզբունքները և գործառույթները, կտարածի սոցիալական պետության հիմնական արժեքները, կտարբերակի սոցիալական նպատակների իրագործմանը նպաստող և խոչընդոտող ծրագրերը և սոցիալական քաղաքականության գործիքները, կվերլուծի տարբեր պետական համակարգերը սոցիալական տարրերի զարգացվածության տեսանկյունից, կգնահատի պետության տարբեր սոցիալական ինստիտուտների ներդաշնակությունը որպես սոցիալական պետության բաղադրամասեր:

**Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Պետության տեսության զարգացում: **Թեմա 2.** Պետության սոցիալական գործառույթների զարգացում: **Թեմա 3.** Սոցիալական պետությունը որպես նորագույն քաղաքակրթությանը հատուկ պետության ձև: **Թեմա 4.** «Սոցիալական պետություն» հասկացության էությունը: **Թեմա 5.** Սոցիալական պետության պատմական տեսակները: **Թեմա 6.** Սոցիալական պետության ֆունկցիոնալ համակարգը: **Թեմա 7.** Սոցիալական իրավունքի տեսությունը: **Թեմա 8.** Քաղաքացիական պետության դերը սոցիալական պետության ձևավորման գործում: **Թեմա 9.** Սոցիալական քաղաքականությունը որպես սոցիալական պետության զարգացման գործոն: **Թեմա 10.** Հիմնական սոցիալական ինստիտուտները սոցիալական պետության համատեքստում:

**Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

#### ***Սոցիալական գործընկերություն***

#### ***Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

#### **Նպատակը.**

Դասընթացը ուսանողներին ծանոթացնում է սոցիալական գործընկերության ձևավորման և զարգացման գործընթացներին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհիմանա, թե ինչ է սոցիալական գործընկերությունը, կյուրացնի սոցիալական գործընկերության կազմակերպման հմտությունները, կսովորի սոցիալական գործընկերությունը ծառայեցնել բնակչության խոցելի խմբերի պաշտպանության գործին:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալական գործընկերության սուբյեկտները: **Թեմա 2.** Շահերի և հետաքրքրությունների հանդեպ փոխադարձ հարգանքը որպես արդյունավետ գործընկերության նախապայման: **Թեմա 3.** Պետական աջակցությունը գործընկերությանը: **Թեմա 4.** Սոցիալական գործընկերության կողմերի պատասխանատվությունը: **Թեմա 5.** Սոցիալական գործընկերության ընթացքում վերահսկողության իրականացումը: **Թեմա 6.** Պայմանագրային փոխհարաբերությունները սոցիալական գործընկերության ընթացքում:

#### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

#### ***Սոցիալական իրավունք***

#### ***Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացել սոցիալական իրավունքի, վերջինիս սկզբունքների և գործառույթների, սոցիալական իրավունքի նորմերի, դրանց տեսակների, սոցիալական իրավունքի իրացման ձևերի, սոցիալական իրավունքի նորմերի կիրառման հիմնական փուլերի, դրանց առանձնահատկությունների, մի-

ջազգային սոցիալական իրավունքի նորմերի, սոցիալական իրավունքի և սոցիալական օրենսդրության միջև գոյություն ունեցող կապին:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կհմանա սոցիալական իրավունքի էության, սկզբունքների, գործառույթների, իրացման ձևերի, սոցիալական իրավունքի նորմերի մասին, կհասկանա սոցիալական իրավունքի նորմերի կիրառման առանձնահատկությունները, սոցիալական իրավունքի և սոցիալական օրենսդրության միջև գոյություն ունեցող կապը, կկարողանա վերլուծել ՀՀ-ում սոցիալական աշխատանքի առանձին ոլորտներին և ուղղություններին առնչվող հիմնական սոցիալական իրավական ակտերը, ներկայացնել կարծիքներ դրանց կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ:

#### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Սոցիալական իրավունքի էությունը: **Թեմա 2.** Սոցիալական իրավունքը սոցիալական նորմերի համակարգում: **Թեմա 3.** Սոցիալական իրավունքի սկզբունքները և գործառույթները: **Թեմա 4.** Սոցիալական իրավունքի նորմերը, դրանց տեսակները: **Թեմա 5.** Սոցիալական իրավունքի իրացման ձևերը, սոցիալական իրավունքի նորմերի կիրառման առանձնահատկությունները: **Թեմա 6.** Սոցիալական իրավունքի համակարգը և սոցիալական օրենսդրության համակարգը: **Թեմա 7.** Սոցիալական իրավահարաբերությունների ընդհանուր բնութագիրը: **Թեմա 8.** Միջազգային սոցիալական իրավունքի նորմերը:

#### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

#### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:

#### ***Սոցիալական բարեկեցությունը II աշխարհի երկրներում***

#### ***Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, 3 կրեդիտ***

#### **Նպատակը.**

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիալական բարեկեցության քաղաքականության էության, սոցիալական բարեկեցության քաղաքականությունը մեկնաբանող մոտեցումների, սոցիալական բարեկեցության քաղաքականության վերլուծության կառուցվածքի, վերջինիս բաղադրիչների, Մառ Զեդոնգի՝ «Երեք աշխարհների» հայեցակարգի հետ:

#### **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը . կհմանա՝ ինչ է «սոցիալական բարեկեցություն», «սոցիալական բարեկեցության քաղաքականություն» հասկացությունները, կհասկանա սոցիալական բարեկեցության քաղաքականությունը մեկնաբանող հիմնական մոտեցումները,

կկարողանա մեկնաբանել «Երեք աշխարհների» հայեցակարգը,  
կկարողանա վերլուծել առաջին, երկրորդ և երրորդ աշխարհի երկրներում առկա  
սոցիալական հիմնախնդիրները և դրանց հաղթահարմանն ուղղված մոտեցումները:

### **Բովանդակությունը.**

**Թեմա 1.** Ներածական դասախոսություն: **Թեմա 2.** Սոցիալական բարեկեցության քաղաքականությունը մեկնաբանող մոտեցումները: **Թեմա 3.** Աշխարհի պետությունների դասակարգումն ըստ տարբեր չափանիշների: **Թեմա 4.** Սոցիալական բարեկեցությունը և սոցիալական առաջընթացը առաջին, երկրորդ և երրորդ աշխարհի երկրներում: **Թեմա 5.** Միջազգային կազմակերպությունների դերը սոցիալական բարեկեցության ապահովման գործընթացում: **Թեմա 6.** Սոցիալական բարեկեցության քաղաքականության վերլուծության կառուցվածքը: **Թեմա 7.** Սոցիալական բաշխման հիմքերը: **Թեմա 8.** Սոցիալական բարեկեցության ապահովման բնույթը: **Թեմա 9.** Սոցիալական բարեկեցության ծառայությունների մատակարարման համակարգի մշակումը: **Թեմա 10.** Սոցիալական բարեկեցության ծառայությունների ֆինանսավորման համակարգը:

### **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

### **Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:  
Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 3, 3, 4 միավոր:



## «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում ընդգրկված դասախոսական անձնակազմը

ԵՊՀ Սոցիալական աշխատանքի մագիստրատուրայում բացված «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում որպես դասախոսներ ընդգրկված են ինչպես ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի փորձառու դասախոսներ, այնպես էլ Հայաստանի սոցիալական ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող ակնառու մասնագետներ:

«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրում դասավանդող դասախոսների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

### Արտակ Խաչատրյան



*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու*


*Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ*

Արտակ Խաչատրյանն ունի դասավանդման հարուստ փորձ և կանգնած է եղել ՀՀ-ում սոցիալական աշխատանքի գծով կրթական համակարգի ձևավորման ակունքներում:

Նրա անմիջական մասնակցությամբ են կայացել «սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսական ծրագրերը ԵՊՀ-ում, այդ նույն մասնագիտությամբ հեռաուսուցման համակարգը Հայաստանում: 1993 թվականից Ա.Խաչատրյանը մասնակցում է ՀՀ-ում սոցիալական աշխատանքի գծով մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը:

Արտակ Խաչատրյանը հեղինակ և համահեղինակ է հրատարակված բազմաթիվ աշխատանքների՝ գրքեր, հոդվածներ և ձեռնարկներ: Նրա անմիջական մասնակցությամբ սոցիալական աշխատանքի մասնագիտական մշակույթը ներմուծվել է ՀՀ քրեակատարողական համակարգ: Ա.Խաչատրյանը որպես փորձագետ ակտիվորեն մասնակցել և մասնակցում է ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներին, նրանում սոցիալական աշխատանքի տարրի ներմուծմանը և զարգացմանը:

## Միրա Անտոնյան



*Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ*

*Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու:*

«Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար:

Մ. Անտոնյանն ունի դասավանդման բազմամյա փորձ: Նա 1996 թվականից աշխատում է ԵՊՀ-ում որպես դասախոս, ինչպես նաև ունի եվրոպական և այլ երկրների բուհերում դասավանդման պրակտիկա (*Բեռնի համալսարան, ANAS-France, Փարիզի համալսարան, Վրաստանի Սոցիալական աշխատողների ասոցիացիա, Վրաստանի պետական համալսարան*):

Միրա Անտոնյանը 2005 թվականից հանդիսանում է Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոնի» **գործադիր տնօրենը**: Նա նաև ընդգրկված է բազմաթիվ ազգային և միջազգային ծրագրերում որպես **փորձագետ**: Մասնավորապես, 2011 թվականից Մ. Անտոնյանը հանդիսանում է ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում ինտեգրված սոցիալական ծառայությունների և սոցիալական ծառայությունների համալիր փաթեթի ստեղծմանն ուղղված Համաշխարհային բանկի և ՀՀ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության ծրագրի **խորհրդատվական խմբի ղեկավարը**, ինչպես նաև տարբեր ժամանակահատվածներում հանդես է եկել որպես **ազգային փորձագետ** երեխաների պաշտպանության, երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի, ՀՀ-ում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծրագրերում:

Մ. Անտոնյանը որպես **վերապատրաստող** մասնակցել և մասնակցում է բազմաթիվ ծրագրերի, որոնցից կարելի է նշել համայնքային սոցիալական աշխատողների, հանրային ծառայողների, քաղծառայողների, դատական համակարգի աշխատակիցների, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների աշխատակիցների վերապատրաստման ծրագրերը:

Միրա Անտոնյանը «Ներդաշնակ հասարակություն» Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի (ՄԱՀԱ) **հիմնադիր նախագահն** է:

Բազմաթիվ ուսումնական ձեռնարկների և գիտական հոդվածների հեղինակ է:

## Անահիտ Սահակյան



*Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու:*

*ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկանի տեղակալ*

Անահիտ Սահակյանը 1992 թվականից աշխատում է պետական համալսարանում և ունի դասավանդման բազմամյա փորձ: Նա նաև որպես **վերապատրաստող** և **փորձագետ** ընդգրկված է բազմաթիվ այլ ծրագրերում: Մասնավորապես, որպես վերապատրաստող Ա. Սահակյանը ընդգրկված է Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից իրականացվող սոցիալական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրում, ինչպես նաև քաղծառայողների վերապատրաստման ծրագրում, որը կազմակերպվում

Է ԵՊՀ հետբուհական վարչության կողմից: Ա. Սահակյանը հանդիսանում է նաև հղի կանանց խորհրդատվական **կենտրոնի կոորդինատորը**, ինչպես նաև «World Vision Հայաստան» կազմակերպության՝ «ՀՀ-ում երեխաների նկատմամբ բռնությունների կրճատման» ծրագրի **փորձագետը**:

Անահիտ Սահակյանը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, մասնավորապես, որպես **խորհրդատու** ընդգրկված է «Զանգակատուն» հկ-ի և Երեխաների աջակցության կենտրոնի ծրագրերում:

### **Յուլիանա Մելքումյան**



*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս*

Յուլիանա Մելքումյանը 1998 թվականից աշխատում է ԵՊՀ-ում որպես **դասախոս**:

1997 և 1998 թվականներին «Tempus-Tacic» ծրագրի շրջանակներում մասնակցել է Գերմանիայի Ֆրանկֆուրտ Սայնի քաղաքի Բարձրագույն դպրոցի Սոցիալական աշխատանք բաժնի դասընթացներին: Նշված մասնագիտական կրթության շնորհիվ, գերմանական կողմի (մասնավորապես՝ պրոֆեսոր Բեատա Ֆինիս Զիգլերի) աջակցությամբ մշակել է «Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն» դասընթացը, որը դասավանդում է ԵՊՀ սոցիալական աշխատանքի բաժնում 1998 թվականից առ այսօր: Հետագայում Յուլ. Մելքումյանը մշակել և դասավանդել է հետևյալ մասնագիտական դասընթացները. «Սոցիալական աշխատանքի սոցիոլոգիական հիմքերը», «Սոցիալական գերոնտոլոգիա», «Աղքատության սոցիոլոգիա», «Սոցիալական աշխատանքի պատմություն», «Սոցիալական ծառայություններ», «Սոցիալական քաղաքականություն», «Աղքատություն և սոցիալական անհավասարություն» և մի շարք այլ դասընթացներ: «Աղքատություն և սոցիալական անհավասարություն» դասընթացը մշակվել է «Մագիստրոսական ծրագրերի հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագրի շրջանակներում:

Յուլիանա Մելքումյանը նաև որպես **փորձագետ-հետազոտող** հաճախ ընդգրկվում է Հայաստանում իրականացվող բազմաթիվ սոցիոլոգիական հետազոտություններում և ծրագրերում, որոնք առնչվում են ՀՀ-ում այլընտրանքային պատիժների համակարգի ձևավորման, մասնագիտական կրթության հիմնախնդիրների, ներառական կրթության և միջին խավի ձևավորման առանձնահատկությունների հետ:

Բազմաթիվ աշխատությունների և գիտական հոդվածների հեղինակ է:

### **Աննա Ոսկանյան**



*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս*

Աննա Ոսկանյանն ունի դասավանդման բազմամյա փորձ: Նա Հայաստանում **առաջին սոցիալական աշխատողներից** է, ով սկսեց դասավանդել «Սոցիալական աշխատանքի մեթոդներ» և «Սոցիալական աշխատանքի մոդելներ» առարկաները:

Ա. Ոսկանյանը ուսումնական ձեռնարկների և բազմաթիվ գիտական հոդվածների **հեղինակ է**, որոնք նվիրված են տարեց մարդկանց, երեխաների, ընտանիքների, կանանց և երիտասարդների հետ իրականացվող սոցիալական աշխատանքին:

Ա. Ոսկանյանը հանրային կառավարման և սոցիալական աշխատանքի միջև մակրոպրակտիկայի շրջանակներում իրականացվող ակադեմիական համագործակցության **հիմնադիրներից է**: Նա նաև ունի տարբեր բնագավառներում (կանայք, տարեցներ, երեխաներ) հասարակական կազմակերպությունների և պետական կառույցների հետ համագործակցության մեծ փորձ: Ա. Ոսկանյանը հանդիսանում է նաև օրենսդրական բազմաթիվ փոփոխությունների **նախաձեռնող և հեղինակ**:

Աննա Ոսկանյանը Հայաստանում սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության զարգացման գործում ունեցած շոշափելի ներդրման համար 2010 թվականին արժանացել է ՀՀ պետական պարգևի՝ տրված ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից:

Աննա Ոսկանյանը հանդիսանում է «Զանգակատուն» բարեգործական հասարակական կազմակերպության **նախագահը** և Հայաստանում քրիստոնյա սոցիալական աշխատողների «Լուսադարձ» միության **հիմնադիրն ու նախագահը**:

Սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության ոլորտում Ա. Ոսկանյանի մասնագիտական հետաքրքրություններն են.

- Սոցիալական աշխատանքի մեթոդները
- Սոցիալական աշխատանքի մոդելները
- Սոցիալական աշխատանքը կանանց հետ
- Ընտանեկան սոցիալական աշխատանքը
- Սոցիալական աշխատանքը երեխաների հետ:

## Լուսինե Կարապետյան



*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս*

Լուսինե Կարապետյանն ունի սոցիալական աշխատանքի մագիստրոսի կոչում: Նա 2006 թվականից աշխատում է ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնում որպես **դասախոս**:

Լ. Կարապետյանը մասնակցել է մի շարք մասնագիտական վերապատրաստումների թե Հայաստանում, թե արտերկրում (Բոլանդիա, Անգլիա):

Լ. Կարապետյանի մասնագիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է հանրային առողջությունը, հոգեկան առողջությունը, սոցիալական ռիսկի կառավարումը և սոցիալական պլանավորումը: Լ. Կարապետյանը սոցիալական աշխատանք է դասավանդում նաև հեռաուսուցման լաբորատորիայի ուսանողների համար:

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է, որոնք վերաբերում են ինտերնետային կախվածությանը, Հայաստանում կանանց վերարտադրողական հիմնախնդիրներին և դպրոցում մատուցվող սոցիալական ծառայություններին:

## Լուսինե Քարամյան




*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս  
Սոցիալական գիտությունների մագիստրոս*

Լուսինե Քարամյանն ունի սոցիալական աշխատանքի դասավանդման շուրջ 8 տարվա փորձ: Այդ ընթացքում նա իր ավանդն է ունեցել ՀՀ-ում «սոցիալական աշխատանք» մասնագիտության և սոցիալական աշխատանքի կրթական համակարգի ձևավորման և զարգացման գործում՝ տպագրելով մի շարք գիտական հոդվածներ, այդ թվում ՀՀ-ում սոցիալական աշխատանքի կայացման և զարգացման վերաբերյալ, ինչպես նաև ուսումնամեթոդական ձեռնարկ դասախոսների համար:

Լ. Քարամյանը ԵՊՀ սոցիալական աշխատանքի բաժնում (բակալավրիատ, մագիստրատուրա) դասավանդում է հետևյալ առարկաները՝ «Սոցիալական աշխատանք առողջապահության ոլորտում», «Սոցիալական աշխատանք համայնքի հետ», «Համայնքային կազմակերպում», «Սոցիալական կառավարում» և այլն: Դասավանդելով Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնում և ղեկավարելով ուսանողների մասնագիտական պրակտիկան, կուրսային և ավարտական աշխատանքները՝ Լուսինե Քարամյանն իր ներդրումն է ունենում սոցիալական աշխատանքի որակյալ կադրեր պատրաստելու գործում: Մինևույն ժամանակ Լ. Քարամյանը դասավանդում է ոչ միայն ակադեմիական միջավայրում, այլ նաև **վերապատրաստումներ է իրականացնում** այն մասնագետների համար, ովքեր հանդիսանալով պրակտիկ սոցիալական աշխատող չունեն սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն:

Լ. Քարամյանի մասնագիտական հետաքրքրությունների ոլորտը հիմնականում ընդգրկում է մարդու իրավունքների և սոցիալական աշխատանքի միջև կապը, սոցիալական աշխատանքն առողջապահության ոլորտում, սոցիալական կառավարումը և առաջնորդությունը:

## Մարինե Յարմալոյան



*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս  
Ունի սոցիալական աշխատանքի մագիստրոսի կոչում*

Մարինե Յարմալոյանը 2007 թվականից աշխատում է ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնում:

2007-2008 թվականներին աշխատել է նաև ՀՀ հոգեկան առողջության հիմնադրամի ցերեկային կենտրոնում որպես

**սոցիալական աշխատող:** Ներկայումս Մ. Յարմալոյանը հանդիսանում է ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի **հայցորդ:**

Մ. Յարմալոյանը նաև հանդիսանում է Կոնեկտիվուտի սոցիալական աշխատանքի դպրոցի հետ համատեղ իրականացվող on-line **դասընթացի պատասխանատուն** է:

Մ. Յարմալոյանի մասնագիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է հոգեկան առողջությունը, սոցիալական իրավունքը, սոցիալական քաղաքականությունը և սոցիալական պաշտպանությունը:

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է, որոնք առնչվում են խնամատար ընտանիքի ինստիտուտի ձևավորմանը ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում, որդեգրությանը, ամուսնական կոնֆլիկտների առաջացման պատճառներին, ինչպես նաև հեռաուսուցման կազմակերպման և իրականացման առանձնահատկություններին:

### Նունե Գեղամյան



*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ*

*Տնտեսագիտական գիտությունների թեկնածու*

Նունե Գեղամյանը ԵՊՀ-ում աշխատում է 2005 թվականից: Նա նաև «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիայի **համանախագահն** է:

Ն. Գեղամյանը բազմիցս մասնակցել է միջազգային կոնֆերանսների և սեմինարների, որոնք տեղի են ունեցել ՌԴ-ում, Իռլանդիայում և Հունաստանում:

Ն. Գեղամյանի մասնագիտական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է սոցիալական քաղաքականությունը, «սոցիալական աշխատանք» մասնագիտության արդի հիմնախնդիրները:

Ն. Գեղամյանը նաև ուսումնասովանողական ձեռնարկների և գիտական հոդվածների **հեղինակ** է:

### Ռազմիկ Մարտիրոսյան

*Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս*

Ռազմիկ Մարտիրոսյանն ունի դասավանդման բազմամյա փորձ: Նա նաև աշխատում է ՀՀ Սոցիալական ներդրումների հիմնադրամում որպես **գործադիր տնօրենի տեղակալ**, ինչպես նաև Հայաստանում **Աշխատանքի միջազգային կազմակերպությունում փորձագետ** է:

Ռ. Մարտիրոսյանը 1999-2003 թթ. եղել է ՀՀ սոցիալական ապահովության **նախարարը**: Նախարար եղած տարիներին Ռ. Մարտիրոսյանը կազմակերպել է ՀՀ սոցիալական ապահովության համակարգի բարեփոխումները, իսկ արդեն **ՀՀ ԳԽ և ԱԾ պատգամավորի** կարգավիճակով ակտիվորեն մասնակցել է սոցիալական ապահովության ոլորտի օրենսդրության ստեղծմանը:

Ռ. Մարտիրոսյանը նաև գիտական հոդվածների հեղինակ է:



### Վարդան Գևորգյան

*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի հրավիրված դասախոս*

Վարդան Գևորգյանը հանդիսանում է սոցիալական պաշտպանության ոլորտի **փորձագետ, հետազոտող-վերլուծաբան**, մասնավորապես, նա 2006 թվականից ընդգրկված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Համաշխարհային բանկի համատեղ «Սոցիալական պաշտպանության վարչարարություն» վարկային ծրագրում **որպես սոցիալական պաշտպանության, մոնիթորինգի ու գնահատման հարցերով փորձագետ**, ինչպես նաև «Երևանյան ակադեմիա» հասարակագետների միջազգային ընկերակցություն» **ՀԿ-ի գլխավոր համանախագահն** է:

Որպես փորձագետ-հետազոտող՝ Վ. Գևորգյանն արդեն 20 տարի զբաղվում է բնակչության սոցիալական պաշտպանության մի շարք ոլորտների հիմնախնդիրների հետազոտությամբ և դրանց լուծմանն ուղղված քաղաքականության մշակման հարցերով: Նա մեծ ներդրում է ունեցել ՀՀ-ում միգրանտների, ընտանիքի ու երեխաների, ծերերի և սոցիալապես խոցելի այլ խմբերի հիմնախնդիրների լուծման ոլորտների պետական կարգավորմանն ուղղված իրավական ակտերի, ինչպես նաև քաղաքականության ծրագրային փաստաթղթերի մշակման և սոցիալական ծառայությունների տրամադրման ինստիտուցիոնալ համակարգերի նախագծման ու ներդրման գործում: Նրա մշակած կառուցվածքագործառնության մոդելի հիման վրա Երևանի Աջափնյակ համայնքում և Գյումրի քաղաքում հիմնադրվել են խոցելի խմբի երեխաների սոցիալական հոգածության և սոցիալ-հոգեբանական վերականգնման համայնքային ցերեկային կենտրոններ:

Ներկայումս Վ. Գևորգյանն ակտիվորեն ներգրավված է Հայաստանում համալիր (ինտեգրված) սոցիալական ծառայությունների համակարգի, բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտում սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրման, սոցիալական աշխատանքի մասնագիտական միասնական չափորոշիչների մշակման, ինչպես նաև բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների ծրագրերի արդյունավետության գնահատման ու մոնիթորինգի միասնական համակարգի մշակման և ներդրման աշխատանքներում:



### **Եվգինե Վարդանյան**

*ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս*

Եվգինե Վարդանյանն ունի Սոցիալական աշխատանքի *մագիստրոսի* կոչում:

2007 թվականից աշխատում է ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնում որպես **դասախոս**: Եվգինե Վարդանյանը նաև նույն ամբիոնի **հայցորդ** է:

2010 թվականից Տեմպուսի «Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագրի շրջանակներում հանդես է գալիս որպես **ծրագրի ադմինիստրատոր** Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի կողմից:

Դասավանդում է «*Սոցիալական աշխատանք իրավախախտների հետ*», «*Սոցիալական վերահսկողություն և շեղվող վարք*», «*Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը*», «*Սոցիալական աշխատանք արդարադատության*

*համակարգում», «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական աշխատանք»*  
առարկաները:

Մասնագիտական հետաքրքրությունների ոլորտը ներառում է *սոցիալական աշխատանքը արդարադատության համակարգում, տեղական ինքնակառավարումը և տեղական ինքնակառավարման մարմինների դերը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում:*

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է, որոնք տպագրվել են ոչ միայն տեղային, այլ նաև միջազգային ամսագրերում:

## **Դասավանդման մեթոդներ**

Նորագույն տեխնոլոգիաները վաղուց արդեն ներթափանցել են կրթության ոլորտ: Այդ առումով բացառություն չի կազմում նաև բարձրագույն կրթությունը: Այսօր դժվար է պատկերացնել որևէ ոլորտում որակյալ մասնագետների պատրաստման գործընթացը առանց դասավանդման և ուսումնառության գործընթացների տեխնիկական հագեցվածության ապահովման:

«Տեմպուս» ծրագրի շրջանակներում մշտապես կարևորվել է նորագույն տեխնոլոգիաների կիրառումը բարձրագույն կրթության ոլորտում: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Տեմպուս ծրագրի խնդիրներից մեկը գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական հաստատությունների կարողությունների զարգացումն է, այդ թվում՝ տեխնիկական ռեսուրսների ապահովումը: Նմանատիպ խնդիր է դրված նաև «Տեմպուս 4-ի» շրջանակներում իրականացվող «Մագիստրոսական ծրագրեր հանրային առողջության և սոցիալական ծառայությունների գծով 511303-Tempus-1-2010-1-UK-Tempus-JPCR» ծրագրի մասնակից համալսարանների առջև: Ակնկալվում է, որ «Տեմպուս» ծրագրի կողմից տրամադրվող աջակցությամբ գործընկեր երկրների համալսարանները մագիստրոսական նոր ծրագրեր ստեղծելուն զուգահեռ համալսարաններում պետք է հիմնեն նաև ռեսուրս-կենտրոններ, որոնք հագեցած կլինեն անհրաժեշտ տեխնիկայով և հնարավորություն կընձեռեն ուսումնական գործընթացը կազմակերպել տեխնիկապես հագեցված լսարաններում: ԵՊՀ ադ-մինիստրացիան արդեն իսկ տրամադրել է ռեսուրս-կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ տարածք, որը վերանորոգվել և կահավորվել է «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի ուսանողներին և դասախոսներին ծառայելու համար: Ռեսուրս- կենտրոնի տեխնիկական հագեցվածության ապահովման գործընթացը դեռ ընթացքի մեջ է: Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարչակազմը նախատեսում է ավարտել ռեսուրս-կենտրոնի ստեղծման աշխատանքները մոտակա ժամանակահատվածում, ինչը հնարավորություն կընձեռի «Սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն» մագիստրոսական ծրագրի ուսանողներին և դասախոսներին՝ ուսումնական գործընթացը կազմակերպել բարձրագույն կրթության ոլորտում լայն տարածում ստացած նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով: